

— դաւանութեամբ բողոքական) և խմեց պապի ու Վաթսեր կենացը միասեղ՝ մինչև իսկ պապի անունը առաջ յիշելով և թագաւորի անունը զանցառութեան տալով։ Նորա ներկայութեամբ ճաշի միջոցին երգուեցաւ նաև պապին նուիրած մի բողոքական հաւորեցական երգ։ Այդ բանի համար Անհատական միութեան (Evangelischer Bund) կենդանական գիււանը մի բողոք ուղղեց պէս կանցիւրին և յանդիմանական պատասխան ստացաւ որի մէջ ասած էր թէ Վատիկանի ներկայացուցչի վարմունքն օրինաւոր է ըստ ամենայնի և թէ Վաթսը իւր զգոհութիւնն է յայտնում բողոքողներին։— Վաթսի կենցաղը յոյս ունին որ Վիլհէլմ կայսրը իւր առաջնիւն աշխատեց զէպի Նրուսպէմ կատարելիք ճանապարհորդութեան միջոցին, տաճկաց սուլթանի հետ ունեցած բարեկամութեան շնորհիւ՝ կկարողանայ տաճիկներին առնել այն տունը, որ Քրիստոսի վերջին ընթերցաց վերնատունն է համարում և իրենց վերադարձնել՝ մի մեծ շնորհ արած լինելով այդպէս պապին։ Սակայն քանի որ նոյն այդ տունը տաճիկների համար սրբութիւն է իրրեւ Դաւիթ մարգարէի գերեզմանի տեղ՝ բնական է որ կայսեր բարեկամութեամբ ետ առնել այն նոյնչափ հեշտ է, որչափ հեշտ կլինէր հրէաների փողով տաճարի տեղը գնել։

Պակաս զօրեղ չէ պապական ազդեցութիւնը փրանսական քաղաքականութեան վերայ, մանաւանդ զօրքի մէջ, Վերջերս այնչափ մեծ ազմունքի պատճառ եղող Դրէյֆուսի դատի առթիւ այդ ազդեցութիւնը անխալտի կերպով երևաց, և նորա դէմ շատ բողոքողներ եղան։ Բայց աւելի զօրեղ է և օտարադաւանների համար փառնգաւոր պապը Աւրստրիայում, մօտ օրերս Հռոմում բացուել է մի նոր ռուսական կոյղեցի՝ Աւստրիայի հպատակ կաթողիկէ եկեղեցւոյ հետ միացած, ութ ժողովների կամ փոքր ուսանների համար հովիւներ պատրաստելու նպատակաւ, Վոլքեդայի վարիչները Յիսուսեաններն են հարկաւ։



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԲԱՆԻ ԽՕՍԲ

ՄԵՐ ԵՐԿՈՒ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒՆԵՐԻ

ՄԵՐ ԸՅՅՄԵՆ ՄԵՍԻՆ.

Յոյս ունինք «Արարտ» ի ընթերցողները շահագրգռութեամբ կարդացին պ. Արեղեանի

լուրջ յօդուածը այն նիւթի մասին։ Խնդիրը ինչպէս որ նա հաւանեցուցիչ պատճառարանութեամբ լուսարանեց, կենսական է, մեր բարձր հոգեւոր զարգացման խնդիր է, ուստի և կարօտ է բազմակողմանի քննութեան, որպէս զի այդ մասին բարի ցանկութիւնները լոկ ցանկութիւն չմնան, այլ միահամուռ դործակցելու խթան և սատարիչ դառնան, և այնու կարեւոր դործի բարգաւաճութիւնն ու յաջողութիւնը ըստ արժանւոյն իրականանայ։

Այս խնդիրը հարկաւ տակաւին շատ ջուր կը վերցնէ, շատ թեր ու դէմ կարծիքներ կը յարուցանէ, մանաւանդ որ մի կողմից արդէն լավում է, թէ անկարելի է բնութեան հոսանքի հակառակ ընթանալ, իսկ միւս կողմից՝ թէ կուրու թիւն է բնութեան հոսանքը չը տեսնել և չճանաչել, որպէս զի ըստ այնմ ընթանանք։ Այս հակառակ առարկութիւնների մէջ ինքնին երևում է միացման հանգոյցը, որով խնդրի լուծումը աւելի պարզուած պիտի համարենք։ Առաջիկայ տողերով մենք պէտք է փորձենք ցոյց տալ թէ պ. Արեղեանի քննադատութիւնը շատ ու քիչ թիւ բիմացութիւնների տեղիք է տալիս և որչափ որ նորա առաջ բերած սկզբունքներն ու հիմունքները անտարակոյս բանաւոր են, նոցանից դուրս բերած եզրակացութիւնները ընդունելի չեն կարող լինել։

Պ. Արեղեանը քննելով՝ արեւմտեան գրական լեզուին յատուկ եղած, մի քանի քերականական հանդամանքների պարմական յեղաշրջութիւնները, յայտնի է կացուցանում որ այն ամէնը միշտ մի որոշ ուղղութեամբ է ընթացել, այսինքն՝ նպատակ է արեւելեան լեզուի մերձեցման (իւր քննութեանց լուսադոյն մասը այս կէտը պիտի համարուի), բայց յետոյ եզրակացում է, թէ այսուհետեւ ըողոր զիջումները արեւմտեան քարաւորից պէտք է պահանջուին, իսկ արեւելեանը հանդիսատ հոգով կարող է ոչ մի նշանակեցից չհրաժարուիլ, ուրիշ խօսքով՝ այս տեղ իսպառ արհամարհուած է իրաւաստ հոգիան, „do ut des“ առածը (տալիս եմ որպէս զի փոխարինես)։

Հերիք չէ ասել, թէ այս դատաւճիտը փափուկ և մեղմ չէ, այլ միանգամայն ան-

արդար և խիստ վտանգաւոր է: Եթէ «Հանդէս Ամօրէի» բերանով Մխիթարեանք մեր առջև դրել են երկու զրական լեզուների միացման խնդիրը, անշուշտ նոքա աչքի առաջ ունեցել են աւելի մեծագոյն հոգս որ զօրութեամբ պէտք է իմանայինք, այն է՝ թէ նախ և առաջ հարկ է նպաստել լեզուի մոխութեան, ըարզաւաճման, կատարելութեան: Բայց եթէ մենք նոցա պատասխանում ենք, թէ եկէք ձեր լեզուն կերտեցէք մեր լեզուի տարազով, արդեօք մենք այնու չէ՞նք խրոխտանում թէ մեր արեւելեան լեզուն մի հրաշակերտ է, իսկ ձերը կոպտատարազ է: Միթէ հիմաւոր է այսչափ ինքնահաւանութիւնը: Եւ ու՞մ սրտին է իւր քսվում այսպիսի առաջարկութիւններով, ո՞վ պէտք է ուռչի և փքուի, ահա վտանգը որտեղ է բացվում: Ծածուկ բան չէ, թէ ինչպէս արեւելեան բարբառի զրազեաները, նոյն իսկ լաւագոյն լինելու կոչուածները, տանջում և նահատակում են հայոց քերականութիւնը, հայոց լեզուն, ինչպէս իրանց դատապարտելի անփութութիւնը պարծանք և հերոսութիւն են համարում: Ինչպէս պատրաստ են լեզուն աւելի քարկոծել և կործանել, քան խոստովանել և փարատել իրանց տգիտութիւնը: Ինչպէս աւելի դիւրութեամբ վստահանում են սրբագործել տգեղութիւնը, անկանոնութիւնը, կազմալուծութիւնը, այլանդակութիւնը, օտար փետուրներով պչրանքը, քան ջանք անել ուղղուելու: Կարծում ենք, որ մեծ բարերարութիւն չէ խոտապարանոց և անհրաժանգ բարձրալիզների համար օրէնք սահմանել, թէ կարող են իրանց լեզուարանական անխիշտանութեան մեղքերը չզղջալ, այլ իրաւունք համարել բռնութեամբ խոնարհեցնել իրանց առաջ ուրիշներին: Այս նշանակում է փաղաքշել ստահակին, որ շարունակէ իւր անձոռնի ստահակութիւնները:

Պ. Արեւեանը չի խղճում յանդիմանութիւն կարգալ նախնադեանցին, որ նա արեւելեան զրական լեզուի հիմքը դնելու ժամանակ՝ անհեռատես զոնուեցաւ և փոխանակ կը մասնիկով բայ խոնարհելու՝ ում վերջաւորութեան ձև հաստատեց, որով մեզ այսօր երկու բարբառ տուեց. իսկ եթէ նախնադեանցը այդ անջրպետը չմտցնէր, մենք

կունենայինք մի զրական լեզու: Զարմանում ենք, որ պ. Արեւեանը դաւանելով հանդերձ, թէ լեզուն մի կենդանի կազմակերպութիւն է, որ ունի ծածուկ խոր արմատներ, որ իւր բնական ընթացքն է ընթանում և որ անհատական համոյքներից բնաւ կախում չի կարող ունենալ, — միևնոյն ժամանակ չի զրժուարանում պնդել, թէ արեւելեան զրական լեզուն կարելի էր այլ ընթացք տալ, քան ինչ որ ստացել է: Երբ որ նախնադեանցը հանդէս եկաւ, արեւելեան բարբառը արդէն կենդանի նորածին էր, Լազարեանց ձեւարանում և Ներսիսեան Դպրոցում արդէն ումով էին խօսում և ուրեմն նախնադեանցը բնութեան հակառակ հոսանքով գնալ չէր կարողանայ: «Ծռաքաղ»-ը փորձեց զ, ի, յ մտցնել արեւելեան բարբառի մէջ, բայց այդ բանը բնութեան հակառակ էր, ուստի և փորձը անպրտուղ մնաց, թէպէտ ներելի է անսոսալ, որ որ մեր բարբառը ամուլ հանգիստացաւ այդպիսի ազնիւ պատուաստի համար:

Բայց աւելի զարմանալի պէտք է համարել այն, որ պ. Արեւեանը լեզու է համարում միայն քերականութեան առաջին մասը կամ ստուգաբանութիւնը: Նա կարծում է, որ եթէ կը մը, զ, թեան և այլ այսպիսի շնչենիքներ վերանան արեւմտեան բարբառից, այն կը մերձենայ մեր բարբառին, իսկ այնուհետեւ մենք կը կարողանանք հասկանալ արեւմտեան բարբառով թարգմանած «Թափառական հրէան»: Թէ արեւմտեան բարբառի ողին չի կարող կազմել այնպիսի արտաքին հանդերձանք, ինչպէս որ է խիստ թափանցիկ կը մը, զ, թեան տարբերութիւնը, այդ ապացուցանում է ինքը պ. Արեւեանը Մարիամեան ուսումնարանի օրինակով, թէ այն տեղի աշակերտուհիները երբէք չկարողացան ըմբռնել արեւմտեան բարբառը, թէպէտ ուսուցչից լաւ իմացել էին կը — մը — թեան ների խրտրական տարբերութիւնը: Եւ հասկանալի է, որովհետեւ բարբառի գաղտնիքն ու բանալին կը — մը — թեան մասնիկները չեն կազմում: Նոյն անյաջողութիւնը նկատուել է նաեւ Ներսիսեան Դպրոցում և մեր ծխական ուսումնարաններում — միևնոյն պատճառից, ամէն տեղ բարբառ են փնտռել լեզուի այնպիսի պարա-

գաներում ուր որ այն չէ բնաւորած: Ուր-
քան ծիծաղելի է դառնում այնպիսի ու-
սահայն, որ մի քանի ամիս տաճկահայոց մէջ
ապրելուց յետոյ, սկսում է իւր բարբառը
փոխել և նոր բարբառ ծեփախօսել: Ծիծաղելի
է դառնում որովհետեւ նոր բարբառին տեւ
դառնալու համար՝ բաւական է սեպում լոկ
միայն կը—մը—թեան զիտութիւնը, և ոչ
աւելի էական հմտութիւն ունենալը: Ուրպէս զի
մէկը ուրիշ բարբառ կամ լեզու սովորէ, նա
պէտք է նախ իւրացնէ այն քարքառի կամ լեզ-
ուի համեմատ մտածելը: Եւ մենք կարծում ենք,
որ արեւմտեան և արեւելեան հայերը հոգեբա-
նօրէն իրարից տարբեր են մտածում ուստի և
գոյանից իւրաքանչիւրը իւր մտածողութեան
համեմատ բարբառ է գործածում ինչպէս որ
ամենայն օտք իւր չափի համեմատ կօշիկ է
հագնում, ապա ուրեմն տարակոյտ չկայ, որ
եթէ մէկը առանց այլեւայլութեան սկսէ միւ-
սի բարբառը գործածել, նա առատ նիւթ կու
տայ կատակարանին: Վարկաբարդի չխօսելու
համար, մի օրինակ բերենք մեր նորագոյն ղե-
կադէնտներին: Երանք լաւ ֆրագներ կազմե-
լու մեծ շնորհք ունին:

Եթէ լսուն, բարի լսուն, երբ պաշտելին գեռ
կը ննջէր մշիկ, մշիկ անուշիկ՝ հոգեսարսուռ երազ-
ներու գիրկն անքուն, դժգոյն, հէք տարփին Ար-
փուն, ներա զբան առջև հէ ի հէ, Սիրոյ, Մայիսը,
անկեց և անկեց չհեռացաւ, կեցաւ սպասեց, մին-
չև երկինք արտասուեց, Արշալուսին առաջին ցոլ-
քերը անոր ծակտին վրայ ինկան ու ցիրուցան մա-
զերը պսպղուն շողերով օծուեցան:

Արդ որչափ որ սրբագրէք այդ հատուածը
պ. Արեղեանի վարդապետած կանոններով՝
կը: երազներու, դրան: անկէց, անոր և այլ
բառերը արեւելեան բարբառի համեմատ,
այնու ամենայնիւ երբէք չէք կարողանայ ար-
եւմտեան բարբառի զրոշմը այն տեղից հա-
նել, իսկ եթէ այդ կտորում յատուկ զրոշ-
մը ընծայուի առաւելագոյն նիւթին՝ տար-
օրինակ բանաստեղծութեան, և ոչ թէ լեզ-
ուի կազմութեան, ապա բերում ենք և մի
այլ օրինակ, ուր որ լեզուի յատկութիւնը
աւելի յայտնապէս է նշմարվում:

ԺԹ. դ գարու այս վերջին հատուածի մէջ՝
այնպիսի նիւթական բաներ կը պատահին, կրնամ
ըսել այնչափ նիւթական պէտքերու կարօտ կ'ըլլայ

մարդկային ընկերութիւնը, որ գրիչը տկամայ կը
հարկադրուի հեռանալ քիչ մը բնագանգական՝ թէ
և վսեմ՝ երկեր արտագրելէ ու կը ջանայ մխրձել
բուն վերջին, աշխատելով ցաւցընել, արիւնել զայն,
որպէս զի ընկերութեան կարող ու ձեռնհաս ան-
գամները հարկ եղած գործանքները սատարեն վեր-
քին, ու քաղցկեղը արմատէն սպիանայ:

Անկեղծութեամբ խոստովանենք, միթէ
շնո կը գտնենք արեւելեան բարբառով այսպէս
ձեւած նախադասութիւններ, որ մտքի յղա-
ցումները երկար շարքով անբռնազրօս արտա-
յայտեն, ամենեւին չյոգնեցնելով լսողի ական-
ջը: Մեր խնդրից դուրս է, եթէ ընթերցողը
այդ լեզուն գտնէ, սեթեւեթ և ճոռումարան,
եթէ անպաճաճ բովանդակութիւնը մարմնա-
ցած տեսնէ ծարձատուն բառերի մէջ. մեր
խնդիրը յաջորդող մտքերի սահուն դասաւո-
րութեան մասին է: Իսկ արեւելեան բարբառի
գրուածքների մէջ հէնց գասաւորութեան ա-
րուեստն է անճոռնի, այս թերին թերեւս այն
հանգամանքով բացատրուի, թէ մենք չունինք
լաւ ուսումնական գրքեր, և ոչ էլ ճաշակ այդ
բանի համար: Այս տկարութիւնը այն աստիճա-
նի է հասնում, որ Սուրիֆտի լարգամանիչ Ա.
Աղայեանցն անգամ չկարողացաւ մի կէս երեսի
չափ առնական լուրջ լարգամանել, ուր որ
երկար շարուած մտքեր կային. իսկ եթէ մեր
առաջնակարգ գրիչ պ. Աղայեանցն այսպէս
հապա ի՞նչ յոյս ունենանք երկրորդականնե-
րից:

Եւ արեւմտեան բարբառը ոչ միայն զխո-
վին այլ կազմակերպութիւն է, քան արեւ-
ելեանը, և ոչ միայն աւելի զարգացած է, քան
արեւելեանը, այլ նոյն բարբառը բացէիբաց
անկարող կը լինի պ. Արեղեանի առաջարկած
զիջումն ընդունել, ինչպէս որ մենք ևս երբեմն
անկարող գտնուեցանք զ: ի: յ նախդիրները մեր
բարբառին պատուաստել: Ապացոյց այդ բանի
առաջ բերենք հէնց միայն վերջագոս մը-ի
գործածութեան օրինակը և տեսնենք, թէ
որքան յարմարութեամբ այն կարող է նախա-
դաս մի դառնալ, ինչպէս որ պ. Արեղեանը
հնարաւոր է գտնում:

Օսար ցրուածի մը յա- Մի օտար գրուածքի յա-
ջողակ լարգամանութիւնը ջողակ լարգամանութիւնը
հէղինակութեան չափ ար- այնչափ արժէք ունի, որ
ժէք ունի չափ և հէղինակութիւնը:

կամ մի ուրիշ օրինակ.

Հատ հանձարեղ եզոր- Մի շատ ընդունակ ե-
ծօն իշխանական ցեղ մ' աանդոտ և գործունեայ
այստեղ մեծ պետութիւն աշխարհակալ ցեղ այս
մը հիմնեց: տեղ մի մեծ պետութիւն
է հիմնել:

Պէտք է փորձել մի քանի անգամ փոխ
ընդ փոխ կարգալ արեւմտեան և արեւելեան այս
ձևերը որպէս զի լսողութիւնը վճիռ հատանէ
և վկայութիւն տայ: Թէ անոնցից որն աւելի
ախորժալուր է, անշուշտ — արեւմտեանը: Վասն
զի վերջագաս միջն' մի հատած է կազմում
կուտակուած բառերի մէջ, ուրեմն և մի հան-
գիստ: որ նախագաս միջն' չի գոյացնում: վեր-
ջագասը սանդուխի աստիճանի պէս զիւրա-
կիւն է, իսկ նախագաս յօդը՝ մի զլորումն է
պատրաստում: որ չլիանա թէ որքան երկար
պիտի տեւէ, ուստի և ընթերցողը շատ ան-
գամ վրիպում է արտասանութեամբ և ճիշդ
դադարը մէկէնմէկ չի գտնում: վերջագաս
յօդը հաստատ նեցուկ է, նախագասը՝ ան-
հաստատ վարանումն է: Յայտ է ուրեմն, թէ
այդչափ չնչին երեւեցած բանով՝ առաւելու-
թիւնը որ կողմին է: Եւ որովհետեւ լեզուն
մտածողութեան պատկեր է, ապա ուրեմն
արեւմտեան բարբառի տէրը աւելի լաւ դոր-
ծի ունի, քան արեւելեանի տէրը, ուստի ան-
հեթեթութիւն է առաջարկել նորան, որ
կամաւ կաշկանդուի՝ իւր վերջագաս միջն' նա-
խագաս մի դարձնելով:

Եթէ պ. Արեղեանը տեսականապէս կար-
ծում է, թէ վերջագաս միջն' շատ անգամ
կրկնուելով՝ երբեմն նախագասութիւնը ծան-
րաբեռնում է, այդ մասին մենք չենք վիճի:
Թէպէտ վերջը ցոյց կուտանք, թէ գործնա-
կանապէս նախագաս միջն' աւելի է մեղանշում
աւելորդ կրկնութիւններով: Բայց կայ մի այլ
հանգամանք, որ զօրութիւն ունի ոչ միայն
մը և մի խնդրի մէջ. եթէ մի քերականական
պաշտօն երկու բարբառների մէջ տարբեր կեր-
պով է կատարվում, այն պէտք է իւրաքան-
չիւրի մէջ և՛ առաւելութիւններ և՛ պակասու-
թիւններ առաջ բերէ: Այնպէս է զարմանալ
ուրեմն, եթէ նախագաս և վերջագաս անորոշ
յօդերից իւրաքանչիւրը յատուկ առաւելու-
թիւններ և յատուկ պակասութիւններ ու-

նենայ: Բայց համոզուած պէտք է լինել, թէ
իւրաքանչիւր բարբառ կ'ունենայ նաեւ իւր յա-
տուկ միջոցները՝ ըստ հնարաւորութեան նոյն
պակասութիւններից զերծ մնալու համար:
Արդ, որոնք են այն միջոցները, ահա ուսում-
նասիրողի հետազօտութիւնը որ բանին հե-
տամուտ պէտք է լինի, և ոչ թէ ափ յափոյ
երկուսից մէկը ջնջէ, իսկ միւսը իւր հովանա-
ւորութեան ներքոյ առնէ: Բանի որ երկու
բարբառները կենդանի են, անոնցից իւրա-
քանչիւրը յատուկ մտածողութեան պարտ
ու պատշաճ գործի է, և ոչ մի մասի մէջ չի կա-
րող անհաստեան կամօք ջնջուիլ, առանց
զգալի վնաս տալու լեզուի ամբողջական շէն-
քին:

Մերոնք այն աստիճան վարակուած են
լեզուի բարեկիտիւն լինելու ախտով, որ պ. Արե-
ղեանը կարող էր այդպիսիների ականջին կրկը-
նելով կրկնել, թէ անկարելի է լեզուի մի մասին
անպատիժ զիպչել, առանց խախտելու և միւս
մասերը, որոնք առաջին հետ սերտ կապուած
են ներքին ծածուկ շարկապներով և հիւս-
ուածութեամբ: Եթէ հիւսուածքից հանում
ենք մի թել, իսկոյն միւսներն էլ հետք դուրս
են քաշվում և անսպասելի կերպով մէջը շատ
հանգոյցներ են քակվում: Լեզուի մէջ աւե-
լորդ բան չկայ. ինչ որ ըստ երեւութին աննշան
է, իսկութեամբ շատ խորհրդաւոր է: Այսպէս
ևս մի անմեղ բան է երեւում քերականա-
կան ձևերի համար միակերպութիւն պահան-
ջելը, որ այժմ՝ պ. Արեղեանն էլ խստութեամբ
պնդում է: Միօրինակութիւն, միատեսակու-
թիւն, միակերպութիւն, մենաձևութիւն բա-
ռերը՝ զայլթակիլիչ, շէմեցուցիչ, խաբուսիկ
բառեր են: Թուում է թէ աղոնք մի լաւ
բան են ծանուցանում, բայց լեզուի մէջ ոչ այլ
ինչ են արտադրում, բայց եթէ տաղանդութիւն,
աղքատութիւն, անձարութիւն, անգամաւու-
ծութիւն: Եւ որ զեղարուեստական օրէնքով
միատեսակութիւնը բաղմադանութիւնից վեր
պէտք է դասուի: Եթէ ախորժելի է պարկա-
պղուկի կամ մանկական թմրկի շարունակ
նոյնական կրկնութիւնը, այնպէս էլ հաճելի
կարելի է համարել մկրատով ձևած լեզուի
միատարազութիւնը:—Պ. Արեղեանը ճիշդ է
նկատել, թէ աշխարհիկ լեզուն զնալով՝ միշտ

աւելի պարզուել է ձեերի բազմապատկութիւններէն: Բայց այս բանից սխալ եղբակացնում է, իբր թէ ուրեմն կարելի է և պաշտած է այժմէն իսկ մնացած ոստերն էլ խաւաւ հորատել: Զոր օր. նա պահանջում է, որ արեւմտեան բարբառը ձեռք վերցնէ: զբարար հոլովական ձեերից և շատանայ արեւելեան ձեերով: Մեր նորագոյն պատմութիւնից մի միջադէպ կարող է լաւ լուսարանել այս առաջարկութեան պիտանութիւնը: Թիֆլիսի հրատարակչական ընկերութեան պաշտօնական անունն է—Тифлисское Общество издания армянскихъ книгъ, որ բառացի և նոյն դասաւորութեամբ թարգմանելով՝ հայերէն այսպէս էին կոչել. Թիֆլիսի ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութիւնի: Բայց շուտով հարկ եղաւ ընկերութիւնը հոլովել զօր օր. ասել «ընկերութեան անդամներ», այն ժամանակ ասացին Թիֆլիսի ընկերութիւնի հայերէն գրքերի հրատարակութիւնի անդամներ, որով իսկապէս դուրս եկաւ «հրատարակութեան անդամներ», և ոչ թէ «ընկերութեան անդամներ»: Ուստի և բառերի դասաւորութիւնը փոխեցին և «ընկերութիւն» բառը կարգեցին այն երկայն շարքի ծայրում անունն այսպէս ձեւացնելով. Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութիւնի ընկերութիւն: Ապա շատ յարմար համարեցին հոլովել այս անունը, վերան «յլեայլ բառեր ևս բարդելով. «Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութիւնների ընկերութիւնի անդամներ», «Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութիւնների ընկերութիւնի անդամների վճարը», «Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութիւնների ընկերութիւնի անդամների վճարի ժամանակը» և ըն և ըն: Բայց մի թէ յանցանք է, փոխանակ պարկապուզի պէս ի-ի-ի չարաչար կրկնաձայնութիւններով ականջը խլացնելու, զբարառ ձեւից օգտուիլ և ասել զօր օր. «Թիֆլիսի հրատարակչական ընկերութեան անդամավճարի ժամանակը»: Կնիք բանի մենք կարծում ենք, որ պէտք է պահանջել ոչ թէ լեզուի միակերպութիւն, այլ անոր ներդաշնակութիւն, համաձայնութիւն, զուգակցութիւն, արուեստը իսկ այս բանի համար հարկաւոր է քաջալերել լեզուի ամենայն ձեւերից ու մի-

ջոցներից օգտուելու ձգտումը, ուրեմն չարահամարհել ոչ զբարարի ոչ զաւառարարառի և ոչ անձնական հանճարի նպաստներն ու զիւտերը:

Պ. Արեւելեանը կ'ուզենար, որ արեւմտեան քաղաքի ձեւերն ևս միօրինակ լինին: Սա զիջողաբար է վարվում արեւելեան բարբառի հետ, երբ որ այնտեղ գործածուած է տեսնում մոնետը, գունետը, իջնետը ձեւը՝ փոխանակ մոնետը, գունետը, իջնետը ձեւի. բայց խտապահանջ է արեւմտեան բարբառի դէմ և հրաւիրում է դադարեցնել հասկնալ, գողնալ, հանել ձեւը և գործածել հասկանալ, գողանալ, հաւանել-ը: Խոստովանում ենք, որ ժամանակով այս բանումն էլ մի ձեւ կը յաղթէ միւսին (թէպէտ ոչ ամենայն բառի վերաբերութեամբ, ինչպէս որ օրինակ կարող է լինել մեր մոնետը, գունետը, իջնետը-ը), բայց չէինք ուզենայ, որ փոխանակ ժամանակի ազդեցութեամբ՝ մկրատով կատարուի այդ երեւոյթը, մանաւանդ որ անհնարին ևս կը լինի: Անյայտ բան չէ, որ կրկնաւոր բառերին ժամանակը այլեայլ նշանակութիւններ է տալիս, որով լեզուն անշուշտ հարստանում է, և ուրեմն երկու ձեւն էլ կենսունակ է դառնում: Այտրեանք այդպիսի օրինակներ է յիշատակում և նշանակութեամբ զանազանում է պարպել, վայլել, հանել բառերը՝ պարապել, վայելել, հաւանել քաղերից:

Եւսմալ (գոհ լինիլ). և շւսմալ (թուով ածիլ).
Պարտքը հասցումնել, և ուտելիքը հասցնել.
Բանաւոր մարդ (մտաւոր), և քանաւոր մարդ (գործաւոր).
Ըսածիդ հաւանեցայ (համոզուեցայ). և ըսածդ հաւանեցայ (հաճեցայ).
Համարե թէ այնպէս է. և համարե թէ քանի է.
Ուսման պարապելով (զբաղելով), և հրացաններ պարապելով.
Տարի. և տարիս.
Հուր (կրակ). և հուրի (վերքի կսկիծ).
Արհեստ. և արտեստ.
Երկայն. և երկար:

Արդ, երբ որ լեզուն այսպէս ճոխացման ուղղութիւն է բռնել, մի թէ հնարաւոր է մկրատով ձեւել այն և օրէնքներ պատուիրել անոր:—

Ասածներից յետոյ ինքնին ինդիր է ծագում արգեօք պէտք է ձեռքերը ծալած թող-

նենք, որ լեզուն ինքնին զարգանայ, թէ ազատ ենք անձնական հեղինակութեամբ և անհատական ձեռներեցութեամբ ևս գործելու: Մեր պատասխանը կարճ է. անշուշտ անհատական նախաձեռնութիւնը հարկաւոր է. հանդէս պէտք է դուրս գալ օրինակ տալով, պէտք է փորձել լեզուի սահմաններում աշխարհակալութիւններ գործել անձնական ոյժերով և վտանգով, բայց և զոհ մնալ վիճակուած բախտից և պատմութեան վճռից. սահման քաջաց, զէնք իւրեանց: Սակայն այլ է առաքինի և խելացի նախաձեռնութիւնը, և այլ է ուսումնականի խցից օրէնքներ ու կանոններ արձակելը:—Մեր գլխաւոր խնդիրը ինչից է ծագել: Վիեննայի «Հանդէս Ամսօրեան» գիտողութիւն էր արել մեր երկու գրական լեզուների միութեան մասին և յայտնել էր հետեւեալ գաղափարը. «Առ այժմ մեզի արեւելեան և արեւմտեան լեզուներու միութիւն անհրաժեշտ հարկաւոր չէ. . . թոյլ տուէք, բարեկամ, որ երկու աշխարհաբաններն ալ ընթանան իրենց ընթացքը . . . վասն զի բնութիւնը ուստում չի գիտեր, վասն զի լեզուի կազմութեան մէջ մարդկային արուեստը խորթութիւն է: Այս խօսքի դէմ ազդեալար և ծարտար լեզուով առարկում է պ. Արեղեանը, բայց որովհետեւ ինքն էլ վերջը լեզուների միութիւն գաղափարը սահմանափակում է և ջատագով է հանգիստնում «լեզուների լոկ մերձեցման», հետեւապէս երկուսի մէջ տարաձայնութիւնը աւելի բառական է, քան էական: Տարաձայնութիւնը աւելի նուազ պիտի համարուի, եթէ պ. Արեղեանը մեզ իւրաւունք տայ աւելացնելու թէ իւր հըմտալից և կարեւոր յօդուածն էլ ոչ ապաքէն տեղ տեղ ապացոյցներ է տալիս թէ «մարդկային արուեստը խորթութիւն է»: Կայ արուեստ, որ գայթակղութիւն է, և կայ արուեստ, որ հրահանգութիւն է. ճիշտից է այս երկուսի սահմանադիժը: Միթէ չի պատահում, որ արուեստողը արուեստակող դառնալու վտանգ է պատրաստում իրան. ճիշտից է խոհեմութեան սահմանը:

Դարձեալ ինքը պ. Արեղեանն է տուել մի լաւ օրինակ այդ որոշելու համար: Մենք ակնարկում ենք նորա ցուցումը թէ արեւելեան

բարբառը այս, այդ, այն գերանունները հօլովելով, և սա, դա, նա գերանունների հօլովները այն պակասի փոխարէն գործածելով՝ օրպիսի հոմութիւններ է պատճառում լեզուին և թէ լեզուն օրքան պիտի ճշդուի, եթէ մի կերպ սկսենք նոյն գերանունները հօլովել, ինչպէս որ գաւառաբարբառներն էլ իւրօք հօլովում են. ապա զօրաւոր պատճառաւորութեամբ առաջարկում է ասորի, աղոր, ասոր ձեւը ընդունել և ամենայն քաջութեամբ նախ և առաջ ինքն է այդպէս գործածում հօլովները: Ես այսպիսի օրինակ է բերում. Մեր գրագէտները գրում են. «Տուրգենեւի այդ զիրքն ընդունելութիւն չգտաւ, որովհետեւ մեր հասարակութիւնը չհասկացաւ նորան» (Տուրգենեւի—թէ այդ գիրքը): Ես նրա յոգնակի. «Տուրգենեւի և Գոնչարովի այդ զրքերը կամ քանադուրդութիւնները ընդունելութիւն չգտան, որովհետեւ մեր հասարակութիւնը չը հասկացաւ նրանց» (Տուրգենեւի և Գոնչարովի—թէ այդ գրքերն ու բանաստեղծութիւնները): Պ. Արեղեանը յիշեցնում է, որ մեր լեզուն նա նորան, նրանց շնչաւոր առարկաների համար է գործածում իսկ այն՝ անշունչ առարկաների համար, որը մի կերպ պէտք է հօլովուի չմոռանալով որ շնչաւոր և անշնչի հայցականը տարբեր է ձևանում—մէկը տրականի նման, միւսը ուղղականի նման.

Ուր. նա, նրանք.—այն, անոնք

Ուր. նորան, նրանց.—այն, անոնք

Տէ. նորան, նրանց.—անոր, անոնց:

Ըստ այսմ վերի նախադասութիւնը այսպէս կը ձևանայ. Եղակի. «Տուրգենեւի այդ զիրքն ընդունելութիւն չգտաւ, որովհետեւ մեր հասարակութիւնը չհասկացաւ այն»: Ես ն. «Տուրգենեւի և Գոնչարովի այդ զրքերը կամ քանադուրդութիւններն ընդունելութիւն չը գտան, որովհետեւ մեր հասարակութիւնը չը հասկացաւ անոնք»:—Բայց կարեւոր է, որ ընթերցողը այս բացատրութիւնների ամբողջութիւնն ինքը կարդայ («Ես և Այն», Ես - Դար, 1897. № 160 և 161): Մենք ամսօրում ենք, որ հեղինակը «նա» և «այն»-ի հետ չի կցել և «նոյն» — որ մեր գրագէտների վէմ գայթակղութիւն է դարձել:

Ահա այդ յօդուածով պ. Արեղեանը ոչ միայն անհերքելի կերպով ակնյայտնի է կացուցանում արեւելեան բարբառի մէջ տիրող մի սխալ ուղղութիւն և թերութիւն, այլ և համարձակ նախաձեռնութեամբ դարմանում է այն, թողնելով օւրիշների կամքին և ընտրութեան, որ կամ իրան հեռեկան կամ լուազոյնը հնարեն և կամ յամառութեամբ շարունակեն իւրեանց լեզուի կաղութիւնը, օտարաբանութիւնն ու ազդութիւնը: Մենք կարծում ենք, թէ միայն այսպէս կարող է արուեստը հրահանգութիւն զառնալ: Այժմ ժամանակ չէ լեզուի միութիւնը նեղ կանոններով կաշկանդել, այն արդէն ինքնին աւելի բնական ընթացքով է կատարվում: Դուք բաց արեք այս ծածուկ ընթացքը, ցոյց տուեցէք պատմական շարժումը, մանաւանդ քերականութեան երկրորդ մասի նկատմամբ ևս, ազատութիւն թողէք ամէն միջոցներից օգտուելու, նոյն իսկ արեւմտեան բարբառից փոխառութիւններ անելու (ասոնք, անոնք)*, որպէս զի բնական ընտրութեամբ յաղթականը յաղթէ և մեր արեւելեան բարբառը զօրանայ, կանոնաւորութիւններ կանայ: Զմոռանանք, որ մենք տակաւին մեծամեծ թերութիւններ ունինք, կարեւոր խնդիրներ ունինք իրաւախօսութեան համար, իսկ «ասոնք քով երկրորդական խնդիր կը մնայ լեզուին այս կամ այն ձևին դէմ ի դուր բողոքելը, բանական մղելը»:

Այսպէս մէկ մէկ դիտողութիւններ անելուց յետոյ, մեզ մնում է, որ մի ընդհանուր հայեացքով և համեմատութեամբ տեսնենք, թէ ինչ վիճակի մէջ են արդի արեւելեան և արեւմտեան բարբառները, թէ անոնք որ աստիճան իրար մերձեցել են, թէ բայց և այնպէս որ կողմումն է առաւելութիւնը, և յորում այդ առաւելութիւնը: Այդ նպատակով մենք ընտրում ենք մի թարգմանական հատուած, որ զրէթէ միաժամանակ կատարուել է և՛ արեւելեան և՛ արեւմտեան բարբառով: Նիւթը Գեղեցիկի մի յօդուած է, որ «Արարատ»-ի մէջ լոյս տեսաւ 1896 թ. նոյեմբերի տետրակում, իսկ «Հանդէս Ամսօրեի»

մէջ 1897 թ. փետրուարի համարում: Երկու աշխատութիւնները կատարուել են հմուտ թարգմանիչների ձեռքով և ինչպէս կիսուած խնձոր՝ այն աստիճան իրար նման են, որ տես թէ մի և նոյն անձի աշխատութիւն լինին: Մեզ այն չի կարող զբաղեցնել, թէ ինչպէս է պատահել այսպիսի նմանութիւնը երկուսի մէջ, այլ հէնց այդ հանգամանքը խիստ նպաստւոր կը համարենք համեմատութեան համար, ուր ceteris paribus կամ ուրիշ անխտրութիւնների հետ՝ առաւելապէս լեզուի զանազանութիւնը պիտի երևայ: Ստորև երկուսից ղուգահաւասար քաղուածքներ տուա՞նք բերելով, մենք աշխատեցինք այդ ամէնը մի կերպ խումբ խումբ դատուած ներկայացնել, բայց ընթերցողը դիւրաւ կը նկատէ, որ իւրաքանչիւր խմբի մէջ բնականաբար միւս խմբերի յատկութիւններն էլ պիտի խառնուէին: —

Նախ տեսնենք մի և մի յօդերի յաճախութիւնը արեւելեան և արեւմտեան բարբառների մէջ և համոզուինք, թէ աւելորդութիւնը արեւելանի յատկանիշ է, ինչպէս որ արդէն առաջ յիշատակել ենք.

Մի շատ ընդունակ, շատ հանձարեղ և գործաւոր և գործունեայ ծոն իշխանական ցեղ մ'աշխարհակալ ցեղ այս այս տեղ մեծ պետութիւն մը հիմնեց և յաջողութեամբ իրրե ակոյեան ջող կերպով կռիւներ է կռուեցաւ Ասորեստամղել իւր ակոյեան Անեայց գէմ, ասորեստանցւոց գէմ:

Դիտելու արժանի է և այն, որ Տիգրանը հելլենասիրական մի քաղաքականութեան է հետևում, ի հարկէ իսկական արեւելեան ձևով:

(հետևում է, ի հարկէ—կը հետևէր, թէ և).

Տրայանոս կայսեր ժամանակ Հայաստանը մի հրամայական նահանգ դարձաւ, բայց թաղ ժամանակաւոր եղաւ և ոչ մի այլ միայն, և որեւէ հետևութիւն մը չունեցաւ:

(0 = նշան աւելորդութեան).

* Թեպէս պ. Արեղեանի առնիք—առնիք-ը արեւմտեանից փոխ ինչ, այլ գործածութիւն ունի:

Ռուբէնը մի փոքրիկ Ռուբէն փոքրիկ իշխանութիւն հիմնեց և նութիւն մը հիմնեց և

մի նոր հարստութեան նոր հարստութեան հիմ-
հիմնադիրը դարձաւ: նադիրն եղաւ:

Հայոց պետութիւնը Հայկական իշխանութիւ-
իւր ներքին կազմակեր- նը ներքին կազմակերպու-
պութեամբ մի կէս ֆրան- թեամբ կէս գաղղիական
սիական աւատական պե- աւատական պետութիւն
տութիւն էր: էր:

Այժմ ուշադրութիւն դարձնենք րայի
եղանակներին և ժամանակներին նուրբ պորձա-
ծութեան վերայ:

Մինչև 640 թուականը Մինչև 640՝ Ռարարտուի
Ռարարտուի թագաւորի թագաւորաց ղեկավարներ-
ղեկավարները նինուէ են րը նինուէ կ'երային:
գնում:

Վարելի է որ այս տեղ Վարելի է որ ասոնք Վի-
նորա գաղթել են Վիլիկիա- լիկիայէն գաղթած ըլլան:
յից որովհետև Պ. Են- Վասն զի Պ. Ենսէնի սը-
զէնի սրամիտ հետազո- րամիտ հետազոտութեանց
տութեանց նայելով շատ համեմատ՝ շատ հաւա-
հաւանական է: որ ծայս- նական է՝ որ հիտտիտ
պէս կոչուած հետտիտ- մեհնադիր կոչուած զը-
ներին սրբազրերի լեզուն րութեանց լեզուն նախա-
հին հայերէնն է: հայերէնն ըլլայ:

(նայելով սրբազրեր — համեմատ մեհնադիր):

Այս պատճառով շատ Այս պատճառով հոգի-
խոնկական եր հոգիմայեց- մէական քաղաքականու-
ւոց քաղաքականութեան թիւնը շատ խոնկեմ քայլ
այն քայլը . . . մ'առաւ . . .

(բայ — ածական):

Ոստիկանների ձեռքը Ոստիկաններու ձեռքն
շատ ծանրացել եր երկրի սաստիկ ծանրացաւ երկրին
վերայ:

(շատ — սաստիկ):

Հիմա համեմատենք իմաստի պայծառ և
ճապաղ արտայայտութեան տատիճանը:

Բայց և այնպէս թու- Հանդերձ այսու Ռարար-
լացած Ռարարտուի պե- տուի տկարացեալ պե-
տութիւնը շարունակեց տութիւնը տակաւին մը-
իւր գոյութիւնը ասորն- նաց: միջոց Ասորեստա-
ստանցւոց ռիսերիմ թնա- նահայց հետ ռիսերիմ թըշ-
մի մնալով: նամութեան մէջ:

(Ընշտուած է թու- (Ընշտուած է տկարա-
լացած Ռարարտուի շա- ցեալ պետութեան միջո-
րունակութիւնը): — ռիսերիմ մնալը):

... այսպէս էլ մի և նոյն ... այսպէս նաև Հայք՝
պարզամտութեամբ հա- մի և նոյն պարզամտու-
յիրը իրենց պատմու- թեամբ իրենց քրիստո-

թեան համար քրիստո- նէութեան սկզբան պատ-
նէական սկզբնաւորու- մութեան համար՝ ասո-
թեան ասորական աւան- րական աւանդութիւնն իւ-
գութիւնն իւրացրել են: րացուցած են:

(եղ, հայերի, քրիստո- (իմաստի ինդրառու-
նեական սկզբնաւորու- թիւնները կամ յարա-
րիւն — շփոթ դասա- բերութիւնները կանոնա-
ւորած): —ւոր դասաւորած):

Բայց ամենից առաջ Ամէն բանէ աւելի Հայ-
Հայաստանի փառքն է աստանի փառքն այն է՝
Յկազմումայն, որ նոյնան որ նոյայ տապանը Արա-
տապանը Արարատեան րատ լերան վրայ նստած
լեռների վերայ է նստել, է:

(առաջ — աւելի):

Ղազար Փարպեցին իւր Ղազար Փարպեցի Այ-
ողեւորութեամբ Այրարա- րարատ գաւառի՝ ոգևո-
տի շարադրած նկարագը- րութեամբ գրած նկարա-
րութեան մէջ ոչինչ չէ գրութեան մէջ չի յի-
ատում այն մասին, թէ չեր բնաւ՝ որ Այրարա-
Այրարատի մէջ է այն տայ մէջ նոյայ տապա-
լեռը, որի վրայ տապանն նին լեռ կայ:
է նստել:

(ողեւորութիւնը իւրն (ողեւորութեամբ գրած
է: շարագրողը Արարատն նկարագրութիւն. նա-
է: աւելորդ է այն մասին, խաղասութեամբ կարճ
որի վրայ: ոչինչ չէ ա- և պայծառ կազմութիւն.
տում): — չի յիշեր բնաւ):

Առաջին անգամ Մա- Առաջինն, որ իրօք Մա-
սիսը նոյնան տապանն սիսը նոյնայ տապանի
իւր վրայ ընդունող լեռը լեռը կը համարէ: է Ս.
համարում է ս. Հիերո- Հերոնիմոս:

նիւմոսը: (առաջին անգամ Մա- առաջինն է Ս. Հերոնի-
սիսը — մոս):

Նորա Բիւզանդացւոց Ասոնք Բիւզանդեանց
հետ թշնամի էին: րայց հետ շատ վատ յարաբե-
առելի մօտ էին խաչակիր- րութեան մէջ էին: որով
ների տէրութեանց: առելի յարեցան խաչակիր-
ների պետութեանց:

Աշխատեց յորձանքի Կը ջանար յորձակմանց
առաջն առնել: դիմադրել:

Այս ժամանակից սկսած Այնուհետև Հայք երբէք
հայերն երբէք նորից մի անկախ պետութիւն մը
անկախ պետութիւն չհիմ- չկանգնեցին:

(Ժամանակի սկիզբը ա- (Այնուհետև՝ ժամանակի
ռանց շարունակութեան ամբողջ շարունակութիւն
է մնացել): է):

Ոչ նուազ մտադրութեան արժանի է բա-
սերի և ձկերի ընտրութիւնը և մօտ կամ
հետու զրուիլը իմաստի ճշտութեան համար.

Աւարատուն իրօք գերիշ- Աւարատու յառաջակող-
խան էր առաջաւոր Ասիայ- ման Ասիայ վրայ գերիշ-
ոււմ.

Ապա առ սակաւ սակաւ Այնուհետեւ այս երկու
այս երկու մեծ պետու- մեծ պետութեանց յա-
թեանց յարաբերութիւն- րաբերութիւնները հետ-
ներն աւելի բարեկամա- ղհետէ բարեկամութեան
կան զարձան. փոխուեցան.

(առ սակաւ սակաւ ա- (հետզհետէ փոխուե-
ւելի զարձան). ցան).

... որովհետեւ Ս. Գրքին Վասն զի Ս. Գրքին
քի Սիշած ազգերի Օան- աղգերու ցանկին եկեղե-
ուանց ցուցակի եկեղե- ցական մեկնութեան հա-
ցական մեկնութեան հա- մեմատ՝ Հայերն Թորգո-
մաձայն հայերն Թորգո- մայէն կը ծագին.

(ձգձգուած է. «համա- կարճ է. «համեմատ».)
մաձայն.

Այս բոլոր առասպել- Այս ամէն զրոյցներն
ները անհմտութեամբ անյաջող և շատ ուշ են
և ուշ են յօրինուած. յօրինուած.

(առասպել, անհմտութեամբ զրոյց, անյաջող).

Յունաց տիրապետու- Յունաց տիրապետու-
թիւնը Հայաստանում լոկ թիւնը լոկ անուանական
անուանու էր.

... այս բարձրագոյն ... այս բարձրագոյն
ծրագիրներին շուտ վերջ ծրագիրներուն յանկար-
տունն. ծական վերջ տունն.

Յուլիանոսի դժբախտ արշաւանք. Յուլիանոսի ժախող ար-
շաւանք.

Խալիֆաների իշխանու- Խալիֆայից տիրապե-
թեան առաջին հարիւրա- տութեան առաջին դա-
մայ շրջանը, շնայելովա- րը՝ թէ և աւերիչ արշա-
ւերիչ արշաւանքներին... ւանքներին...

(հարիւրամեայ շրջան, շնայելով. դար, թէ).

Սենեքերիմը և Գագիկ Սենեքերիմը և Գագիկ
Բագրատունին իրենց տե- Բագրատունին իրենց տե-
րութիւնները զիջան Բիւ- րութիւնները յանձնե-
զանգացոց. ցին Բիւզանդացոց.

(զիջան — յանձնեցին).

Վերջ ամենայնի տեսնենք աւելորդ և
օտար բառերից ու ձևերից զգուշութիւնը.

Վերջին անգամ երե- Վերջին անգամ երե-
միս մարգարէն յիշատա- միս մարգարէն կը յիշե-
կուի է այս պետութիւ- այս պետութիւնը. այ-
նը. Սապա այնուհետեւն- նուհետեւ պատմութեան
յայտանում է պատմու- մէջէն անհետ կ'ըլլայ.
թեան միջից.

Յամենայն դէպս նորեկ Յամենայն դէպս նորեկ
հնգհազարամանական իշ- հնգհազարամանական իշ-
խող ցեղն այնքան իւրա- խող ցեղն իւրացնելու
ցընելու ոյժ և կարողու- ոյժ ունէր. որ յաջորդ
թիւն ունէր, որ Ոնա հե- զարերու ընթացքին մէջ
տեւեալ զարերի ընթաց- հին օտարազգի նախա-
քում, հին, ծագմամբ օ- բնակիչներն ամբողջովին
օտար, բնիկ ժողովուրդն ամբողջապէս իւր հետ ձուլեց.

(հնգհազարամանական, (հնգհազարամանական,
հետեւեալ, ծագմամբ օ- յաջորդ, օտարազգի,
տար, բնիկ ժողովուրդ, նախաբնակիչ, ամբող-
ամբողջապէս). ջովին).

Առաջ Լազարոյն եւ ուրիշ- Յառաջ Լազարոյ և ու-
ները ընդունում էին որ րիշները կը կարծէին որ
հնգհազարամանական ծա- հնգհազարամանական Հա-
գում ունեցող հայերն ա- յերն անձուկ ազգակա-
մերձաւոր ազգականու- նութիւն ունին Իրան-
թիւն ունին Իրանացոց ցւոց հետ, բայց այժմ
հետ, բայց այժմ բոլոր- իբրեւ բոլորովին սխալ
րովին սխալ համարելով թողուած է այս. ինչ որ
թողել են այդ. ինչ հա- Հայերն իրանական լե-
րըստութիւն որ հայերն զուէ ունին, պատմական
իրանական լեզուից ունին, ժամանակները փոխ ա-
Սայդ պատմական ժամա- ռած են. ինչ որ ազգային
նակներում են փոխ ա- պատմագիրներն... կ'ա-
ռել, ՍՆՆ ինչ որ ազգայ- ւանդեն, մեծաւ մասամբ
ին պատմագիրները... և ոչ իսկ պատմական
աւանդում են, ըստ մե- արժէք մ' ունին, այլ
ծի մասին մինչև իսկ գիտական կարկատանք
պատմական արժէք չու- են.
նի, այլ հիմնուած է
գիտական կոմբինացիա- յի վրայ.

(ընդունում էին, Լա- (կը կարծէին, այլ թո-
զարդը և ուրիշները թո- ղել են, այդ փոխ առած
ղել են, այդ պատմական, են, կարկատանք).

Բոլոր ժամանակներում Ամէն ժամանակ Հայաս-
Հայաստանի կոյսուքան տանի փղափսքորութիւնը

սերտ կապ ունէր Իրանի սերտ կապ ունէր Իրանի հետ:

Ընթերցողին ենք թողնում, որ մեր ընդգծած, նշանած (0) և փակագծի մէջ առնուած տարբերութիւնները լաւ համեմատէ և այնպէս գաղափար կազմէ արեւելեան և արեւմտեան բարբառների արդի վիճակի մասին: Մեր կարծիքն այն է, որ արեւմտեան արեւելեանին դեռ ևս շատ բան կարող է ուսուցանել, և ոչ թէ ինքն է կարօտ մեղանից խրատուելու:

Ս. Ս.



ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ, ԴՊՐՈՅ .

և

ԱՇԽԱՏԱՆՈՐ ԵՂԱՅԵՐՈՒԹԻՒՆ.



Այս երկրաւոր կեանքում մարդկային ազգի երջանկութիւնը գտնել՝ շատ հին ժամանակներից գրաւել է մտածող մարդոց ուշադրութիւնը: Այդ նիւթի վերայ կազմուել են շատ շատ տեսութիւններ, առաջարկուել կեանքի նոր կազմակերպութիւն, ընկերական յարաբերութեանց բոլորովին նոր կանոններ՝ սկսելով առասպելական Բիւրասպաներից մինչ Պղատոն և մինչև նորագոյն ժամանակների „Contra-social“ ները (Ռուսոս) և ընկերավարական ծրագիրները, այդ խնդիրը իւր ոյժը չի կորցրել և այժմ:

Ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն՝ օրէնքներ կազմողների առաջնորդող սկզբունքներն են այժմ, որոնք, ինչպէս ամէն մի քրիստոնեայ գիտէ՝ նաև աւետարանի արծարծած և յառաջ քաշած գաղափարներն են և դէպի բաղդաւորութիւն տանող առաջին քայլերը: Բայց բաւական չէ գեղեցիկ սկզբունքներ ունենալ. ներկայում ամէնքի համար պարզ է, որ երջանկութեան հիմնաքարը պէտք է փնտռել հասարակութեան կազմակերպութեան մէջ. միայն այս կէտում այդ խնդրով զբաղուողները երկու բանակի են բաժանուում:

Ոմանց համար մարդ բաղդաւորութեան կարող է հասնել քրիստոնեական սկզբունքների վերայ հիմնած անդրդուելի հաւատով ուրիշները ձգտում են իրերի զրուծիւնից, կամ ընտելութեան երեւոյթներից հանել բաղդաւորութեան, երջանկութեան օրէնքներ: Որքան էլ տարբեր և իրար տրամադծօրէն հակառակ լինէին նրանց հայեացքները, սակայն մի

բան պարզ է, որ այժմ մարդիկ հաւասարապէս հաւատացած են, թէ կարելի է այս աշխարհի վերայ երջանիկ և բաղդաւոր ապրել, թէև դէպի բաղդաւորութիւն տանող ճանապարհները տարբեր են:

Մի անգամ կարելի համարելուց յետոյ, երկու կողմից էլ պահանջում են համոզմունք և հպատակութիւն առաջարկուած օրէնքներին: Առաջինների համար շարժող գաղափարը, հիմնական օրէնքը սեռն է. առանց սիրոյ կեանք և կենդանութիւն չկայ. նա պիտի ոգևորէ, ամէն անհատի կեանքին բովանդակութիւն և եռանդ մատակարարէ: Այս վարդապետութեան հակառակորդները պնդում են, որ անհրաժեշտութեան օրէնքն աւելի զօրեղ է, աւելի պինդ է կապում համայնքի անդամներին իրար հետ: Բայց չմոռանանք, որ անհրաժեշտութեան օրէնքը հարկադիր ստիպմունք է, ազատութեան բացակայութիւն, այն ինչ սէրը ծընունդ է մեր յօժար և ազատ կամաց, ճիշդ է, որ համայնքի ամէն անդամ պիտի տանէ ընդհանուր ծանրութեան մի մասը, բայց բնուր թեթեւեմ է, երբ շարժողը սէրն է: Փոքր ծանրութիւն չէ մօր համար նորածին մանկան խնամքը, սակայն ո՞վ կարող է ասել, թէ դա մօր համար բեռն է: Քրիստոնեական վարդապետութեան այս խորին և հիմնական ճշմարտութիւնը միացնում, կենդանացընում, ոյժ և եռանդ է աղգում՝ առանց որոյ ոչ մի ընկերութիւն կամ համայնք չէր կարող ապրել. սակայն ինչպէ՞ս տնկել այդ առաքինութիւնը սրտների մէջ:

Մարդուս միտքը մշակել, գիտութիւններով հարստացնել, մի առանձին դժուարութիւն չի յարուցանում, և ժամանակի գործ է այդ, Բայց ըզգացմունքի և հոգու մշակութիւնը մեծ ջանք, համբերութիւն և անդուլ եռանդ է պահանջում: Շատ դժուարին գործ է մարդուս մէջ պատուաստել բարոյական գաղափարներ՝ հիմնուած սիրոյ վերայ. առաւել ևս դժուար է այդ սէրը և բարոյական զգացմունքները ի գործ մղող սովորութիւն դարձնել: Մանաւանդ որ ընտելութիւնը մեր մէջ տնկել է եսականութեան և ինքնապաշտպանութեան ընտելութիւնները, որոնք երբէք չեն ոչնչանում և հզօր հակառակորդներ են սիրոյ դէմ: Ուրեմն որքան մեծ ջանք պիտի գործ դնէ մարդ, որ սէրը գերակշռող զգացմունք դարձնէ: Հարկաւ մանկավարժութիւնը յիշեալ հակառակութիւնը անշնչեմ է չի համարում, այլ նոյն խի հաւատացնում է մեզ, որ կարելի է բոլորովին խեղդել եսական մրցումները և ազատ ասպարէզ տալ սիրոյ զարգացման, սակայն մեր դպրոցները ցարդ իրր իդեալ են ընդունել այդ, և երբէք նորա իրականացման համար առանձին ուշադրութիւն և ջանք գործ չեն դրել, թէ հասարակութեան և թէ գրականութեան